ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/244

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.05.2022թ. թիվ 26/26-1/9124-2022 գրությամբ «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.05.2022թ. թիվ ՊՆ/02/2287-2022 գրության հիման վրա, 19.05.2022թ. թիվ 26/26-1/9124-2022 գրությամբ նախաձեռնել է «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մեթր-սթիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մեթր-սթիլ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Մեթր-սթիլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/244 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.05.2022թ. թիվ ՊՆ/02/2287-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ի միջև 24.05.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-2/2-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. մայիսի 5-ին միակողմանի մասնակի լուծել է N ԳՀԱՊՁԲ-21-2/2-1 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 06.05.2022թ. հրապարակվել է www. gnumner. am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/244 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/244 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/244 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն

հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ի միջև 24.05.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-2/2-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի Հավելված N 1-ի Գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափի միավորը	Ընդհանուր քանակը	Ապրանքի մատակարարումը 2021թ. ըստ եռամսյակների, ընդ որում
				2-րդ եռամսյակ
1(41)	Սպորտային տեղեկատվության ցուցատախտակներ Տարածության չափիչներ	հատ	1000	1000
2(43)	Ցուցանակներ և հարակից առարկաներ Մեկնարկ-վերջնագիծ ցուցանակ	հատ	400	400
3(44)	Ցուցանակներ և հարակից առարկաներ Շրջադարձ ցուցանակ	հատ	200	200
4(45)	Փայտե արկղեր ֆիզիկական պատրաստության կրովի արկղ	հատ	200	200

3. ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետի ՊԺԿ Ռ.Օհանյանը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ ԶՈՒ ՊԳՎ ՖՊ և Ս ծառայության պետը 20.04.2022թ. է/փ ելք 5 գրությամբ առաջարկել է ՀՀ ՊՆ և «Մեթր-Սթիլ» ՍՊ ընկեության միջև 24.05.2021թ. կնքված ԳՀԱՊՁԲ-21-2/2-1 ծածկագրով պայմանագիրը՝ չմատակարարված 75 հատ «ֆիզիկական պատրաստության կրովի արկղ» ապրանքատեսակի մասով, միակողմանի լուծել (ուշացում 190 օր), հիմք ընդունելով պայմանագրի 21.7.1. կետի «բ» ենթակետի պահանջը, քանի որ «Մեթր-Սթիլ» ՍՊ ընկերությունը պատրաստակամություն էր հայտնել վերոգրյալ խմբաքանակը անհատույց հատկացնել, սակայն մինչ օրս չի մատակարարել:

Վերը նշվածից ելնելով խնդրում եմ հանձնարարել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչությանը՝ ՀՀ ՊՆ և «Մեթր-Սթիլ» ՍՊ ընկերության միջև կնքված ԳՀԱՊՁԲ-21-2/2-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծել:

Կից ներկայացնում եմ նաև ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության վճարահաշվարկային գործառնությունների վարչության կողմից 27.04.2022թ. ՆՏԱ ԳՎ մուտք N1839 գությամբ տրամադրված տույժերի և տուժանքների վերաբերյալ հաշվարկը»:

4. Պատվիրատուն «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ին ուղղված 06.05.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ի միջև 24.05.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-2/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ն 2021թ. 2-րդ եռամսյակի ընթացքում պետք է մատակարարեր թվով չորս անվանատողով նախատեսված ապրանքներ, որոնցից մեկ անվանատողով նախատեսված, ընդհանուր 200 հատ փայտե արկղերից (Ֆիզիկական պատրաստության կրովի արկղ) 75 հատ չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. մայիսի 5-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 177 911 ՀՀ դրամ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 499 400 ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի կատարման ապահովում) և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 749 100 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 06.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.05.2022թ. թիվ 26/26-1/9124-2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.05.2022թ. թիվ ՊՆ/02/2287-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ի միջև 24.05.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-2/2-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի Հավելված N 1-ի Գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափի միավորը	Ընդհանուր քանակը	Ապրանքի մատակարարումը 2021թ. ըստ եռամսյակների, ընդ որում
				2-րդ եռամսյակ
1(41)	Սպորտային տեղեկատվության ցուցատախտակներ Տարածության չափիչներ	հատ	1000	1000
2(43)	Ցուցանակներ և հարակից առարկաներ Մեկնարկ-վերջնագիծ ցուցանակ	հատ	400	400
3(44)	Ցուցանակներ և հարակից առարկաներ Շրջադարձ ցուցանակ	հատ	200	200
4(45)	Փայտե արկղեր ֆիզիկական պատրաստության կրովի արկղ	հատ	200	200

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետի ՊԺԿ Ռ.Օհանյանը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ ԶՈՒ ՊԳՎ ՖՊ և Ս ծառայության պետը 20.04.2022թ. է/փ ելք 5 գրությամբ առաջարկել է ՀՀ ՊՆ և «Մեթր-Սթիլ» ՍՊ ընկերության միջև 24.05.2021թ. կնքված ԳՀԱՊՁԲ-21-2/2-1 ծածկագրով պայմանագիրը՝ չմատակարարված 75 հատ «ֆիզիկական պատրաստության կրովի արկղ» ապրանքատեսակի մասով, միակողմանի լուծել (ուշացում 190 օր), հիմք ընդունելով պայմանագրի 21.7.1. կետի «բ» ենթակետի պահանջը, քանի որ «Մեթր-Սթիլ» ՍՊ ընկերությունը պատրաստակամություն էր հայտնել վերոգրյալ խմբաքանակը անհատույց հատկացնել, սակայն մինչ օրս չի մատակարարել:

Վերը նշվածից ելնելով խնդրում եմ հանձնարարել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչությանը՝ ՀՀ ՊՆ և «Մեթր-Սթիլ» ՍՊ ընկերության միջև կնքված ԳՀԱՊՁԲ-21-2/2-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծել:

Կից ներկայացնում եմ նաև ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության վճարահաշվարկային գործառնությունների վարչության կողմից 27.04.2022թ. ՆՏԱ ԳՎ մուտք N1839 գությամբ տրամադրված տույժերի և տուժանքների վերաբերյալ հաշվարկը»:

Պատվիրատուն «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ին ուղղված 06.05.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ի միջև 24.05.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-2/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ն 2021թ. 2-րդ եռամսյակի ընթացքում պետք է մատակարարեր թվով չորս անվանատողով նախատեսված ապրանքներ, որոնցից մեկ անվանատողով նախատեսված, ընդհանուր 200 հատ փայտե արկղերից (Ֆիզիկական պատրաստության կրովի արկղ) 75 հատ չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. մայիսի 5-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 177 911 ՀՀ դրամ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 499 400 ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի կատարման ապահովում) և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 749 100 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 06.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

<u>բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի</u>:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 24.05.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-21-2/2-1» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.05.2022թ. թիվ 26/26-1/9124-2022 գրությամբ «Մեթր-սթիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**